

ՆԵՐՐՈՂԵԱՆ

ԱՄԻՐՏՈՒՎԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ ԲԺԺԿԻՆ

Կներ մահուան 425րդ տարելիցին առթիւ

ԱՐՏԵԱՍԱՆՆԵՐ

ՅՕԶԲ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՆԵԱՆ

Հայ Բժշկական Միութեան ժողովին մէջ

11 Դեկտեմբեր 1921



Յղ. Ժ. ՀԱՐՆՅՆ

Ինքն ի զարմ Արիզոն Խան

ԱՐՄ 1922



Հիմա Դուրս չի տրվում:

✓

61 (47.925)(09)

թ

ՆԵՐՐՈՂԵԱՆ

ԱՍԻՐՏՈՒԿԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ ԲԺԻՇԿԻՆ

անոր մահուան 425րդ տարելիցին առթիւ

ԱՐՑԱՍԵՆԵՑ

ՏՕՔԹ. ՎԱԼԵԱՍ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

Հայ Բժեկական Միութեան ժողովին մէջ

11 Դեկտեմբեր 1921

A II
1306



Յայր. Յ. ՀԱՐԵԱՆ

Բերա Բարձրագ-գարու Աֆշիկա իսան

և. ՊՈՒԼԻՍ 1922



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ՄԱՐԿԱԿԱՆ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ՄԱՐԿԱԿԱՆ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1901 ՎԵՐՈՒՄ 11



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

1501
H

Հմար Թանգարտ և Գաղտնի
Բար Գրա Գրառար

Զե Կամպրուպի

Երբ Գրառար

Գրառար Գրառար

20004

Այս գրառարայ աշխատութիւնս կը

նախընդհանրապէս Միւլիսիւն,

Խմբագրութիւն Խմբագրութիւններս

Երբ Գրառար, անոր Կառնութիւն

(1912—1922) տարեգրութիւն

Զրկանին Կրմանը տարեգրութիւն

S. 4. 3. 8.

Ն Ե Ր Թ Ո Ղ Ե Ա Ն

ԱՄԻՐՏՈԼՎԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ ԲԺԻՇԿԻՆ



Սիրելի Արուեստակալացեալ,

Մեռելներու յիշատակը պատուել, անոնց համար շիրիմներ կանդնել, մահարձաններ կերտել, ամէն կրօնփի և ազգի մէջ պարտականութիւն մ'է գերազանցօրէն նուիրական, որ կատարեալ պաշտուծի կը փոխուի՝ երբ կը կատարուի յուշ ածելու համար ա'յնպիսի դէմքեր՝ որոնք իրենց ազգին և հանուր մարդկութեան բարօրութեանը ու յառաջդիմութեանը բոլորանուէր կեանք ժը ապրելէ յետոյ մեկնած զացած են այս աշխարհէն:

Վաղնջական շատ հին ժամանակներէ ի վեր մարդկային ընկերութիւնը երբէ'ք չէ՝ ուղած այդպիսիները մոռացութեան վիճին մէջ թաղուած թողուլ, և սովորութիւն ըրած է, Տարեդարձի կամ Յոբելեանի հանդէսներով անցեալի թանձր քօղը պատուել, զանոնք 'ի յայտ բերել՝ վերկենցադել, և անոնց ունեցած օգտակար ու արդիւնաւէտ գործառնութիւններու պատկերը ներկայացնել նոր սերունդին, իբր խրատատու և իբր հշաւիրակ, դէպի աւելի առաջ ընթանալու, դէպի աւելի բարձր զարգացումներու հորիզոնը սաւառնելու:

Դեղեցիկ և վսեմ սովորութիւն ա'րդարև, զոր հայ Բժշկական Միութիւնն ալ սիրով ընդգրկեց, և

անա յարգանքի մասնաւոր արտայայտութեամբ, ուղեց
աննշմար չթողուլ ԱՅՍ ՕՐԸ, քառադարեան և աւելի
տարեդարձը մահուան Հայ Բժիշկի մը և վերապրեցնել
պահ մը մեր մէջ յիշատակը ԱՆՈՐ, որ մեծապէս ար-
ժանի է երախտագիտութեան արդի Հայ Բժշկական
դասուն:

Իբրեւ համեստ պրպտող մը Հայ Բժշկական Պատ-
մութեան, երբ պատիւ կ'ունենամ մեր այս աւուր ժո-
ղովին նպատակին վրայ խօսք առնել, ես պարտաւոր
կ'զգամ զիս, իմ սրտազեղ շնորհակալութիւններս նախ
յայտնել Միութեանս Ատենապետին և Ատենադպրին,
Տօքթ. Եազուպի և Տօքթ. Հ. Միսաքեանի, այն սի-
րայօժտը ընդունելութեան՝ զոր ըրին, հանդէսիս հա-
մար նախապէս իրենց ներկայացուցած առաջարկիս.
Շնորհակալութիւններս նաև յարգելի ժողովականնե-
րուդ, որ ձեր միահամուռ հաւանութեամբը այդ առա-
ջարկիս գործադրութիւնը որոշեցիք անմիջապէս:

* * *

Երբ մեր հին բժշկարանները թղթատելու ելլանք,
անոնց քանիներուն մէջ, կարելի չէ աչքէ վրիպեցնել
թուական մը, որ Հայ Բժշկութեան սուգին, հաժայն և
փառքին յուշարարն է՝ ՎԻՆԴՆԱԲԹԻ Տ ԴԵԿՏԵՄԲԵՐ
1496-ը, որովհետեւ այդ օրն էր՝ որ անհետ կ'ըլլար
նշանաւոր Հայ Բժիշկ ԱՄԻՐՏՈՒՎԱԹ ԱՄԱՍԻԱՑԻՆ,
15րդ Դարու Հայկական կեանքի յոգնատխուր գիշերին
յուսատու այդ աստղը, որ 'ի սպառ կը շիջանէր, եր-
կարամեայ գործունէութեան բեղմնաւոր շրջան մը բո-
լորելէ և Հայ Բժշկական Պատմութեան համար ամե-
նափայլուն դրուագ մը յօրինելէ յետոյ:

Հայութեան և Հայ գլխականութեան ամենախեղճ ժամանակներն էր 15րդ դարը. Հայաստան բոլորովին աւեր աւերակ, ամայի. Հայ ժողովուրդը հուրէն սուրէն փախստական, ցիրուցան գաղթած օտար երկիր. Հայ միտքը ամլացած, Հայ քնարն ու տաւիղը բեկբեկ՝ լռած, հա՛ղիւ թէ հայրենի երկիրքին տակ կը մնար թովմա Մեծոփեցի մը, որ խաւար մթութեան մէջ շողշողացող առկայծ կանթեղի պէս կը պլպլար դեռ իր քանի մը ընկերներով ու աշակերտներով, որպէսզի՝ սպառնալից վերջնական կործանումէ փրկէր, կանգուն պահէր Մեծօփայ հռչականուն Վանք-Դպրոցը, գրչի ու ժափի հիասքանչ արտադրութիւններու այդ վաղեմի Լոնձայարանը:

*
* * *

Հայ ազգային վիճակի ամենաթշուառ այդ դարուն սկիզբներն էր՝ դէպի 1416—1420 թուականներուն, Լեւոնի քաղաքին մէկ աեկիւնը աննշան ընտանիքէ կը ծնէր Ամիրտովաթ, նշանակուած ըլլալով՝ իր տարաբաղդ ցեղին մարած պատիւը հրահրելու՝ Մեծոփեցի Պատմագիրէն յետոյ:


Հայրը կը կոչուէր Նզիա, և եթէ իր անունը հայաչունչ ձայն մը չի հնչեցնէր մեր ականջին, գիտնալ պէտք է՝ թէ այն ատենի տիրող խռժուժ, արիւնարբու բարբառասութիւնը, որ Դամոկլեսի սուրի պէս դժնդակ կերպով կը շողար շարունակ Հայուն գլխուն վերեւ, պատճառ էր՝ զի քրիստոնեաներ՝ մանաւանդ Հայեր, Պարսիկ կամ Թուրք յորջորջումներ առնէին, իրենց իսկութիւնը, ո՛հ հայութիւնը կարելի եղածին չափ ծածուկ ասլեցնելու համար:

եղիաի որդի Ամիրտովաթ, իր նախնական ուսումը Ամասիոյ մէջ առած ըլլալ կ'երեւի. բայց կ'ենթադրեմ թէ չա՛տ կանուխէն սիրող մը եղած է նա Ասկղեւսեան արուեստին, որուն համար լիկզբները՝ թերեւս ծննդավայրի «բժիշկ» անունով ճանչցուած աղօթողներուն, ակսերներուն կամ սափրիչութիւն ընող արհեստաւորներուն քով ծառայեց, ու իբր թէ քիչ-չատ բան սորվելէ յետոյ, չուեց, գնաց օտար աշխարհ, հաւանաբար Պարսկաստան, կամ աւելի՛ Պաղտատ, ուր այն ատենները դեռ գոյութիւն ունէր բժշկական դպրոց։ Եւ այս ենթադրութիւնս Ամիրտովաթ ինքը ինձ ընել կուտայ, երբ իւր գործերուն մէջ կը գրէ թէ՝ «Գնացայք շուրջ եկաք ի բազում քաղաքանի», «Եւ ի յերկրէ ի յերկիր շատ բժեկութեան զարհեստն եի գործեր»։

Չարաչար աշխատութիւններու կուրծք տալով, կը յաջողի սիրած աշուեստը ձեռք բերել և հետզհետէ տէր հմտութեան, դիտակ զանազան լեզուներու, պարսիկ և արաբիկ նշանաւոր բժիշկներու գործերովը իր փորձառութիւնը կը սրէ, Հրպպոկրատի և Գաղիանոսի բժշկարանները ուսումնասիրելով կը զարգանայ, և այս բոլոր հեղինակներուն հետ չի մոռնար նաև կարգալ իրմէ հնագոյն Հայ բժիշկներու թողած հատուկոտոր երկասիրութիւնները, ինչպէս կը յայտնէ իւր գրած աշխատութիւններուն մէջ։

Բժշկական ուսումը կարելիութեան սահմանին մէջ կատարելագործելէ յետոյ, հարկաւ վերստին իւր հայրենիքը դարձաւ, բայց կ'երեւի թէ երկաբ չէ մնացած հոն, որովհետեւ՝ դժբաղդաբար հալածական, կ'օտիպուի իր համարիւն ազգակիցներուն նման խոյս տալ և երկրէ երկիր թափառական շրջիլ, ծովերէ անցնիլ, մինչեւ որ

Յիլիպէ քաղաքը վերջ ի վերջոյ ընկալուչ կ'ըլլայ անոր
1459 կամ 1460 թուականներուն :



Աւելի քան հաւանական է, որ այս քաղաքը բաւական տարիներ Ամիրտուլվաթի բժշկական գործունէութեան խաղաղիկ մէկ հանդիսավայրն եղած ըլլայ. զի այն տեղ է որ անոր գրական կեանքն ալ կ'սկսի ընթիւղիլ, բողբոջիլ. հոն է որ նա ձեռք կ'առնէ գրել 1466 Դեկտեմբեր 25ին իւր անդրանիկ աշխատութիւնը, Անդամազննութեան, Սխտաբանութեան և Ախտադարմանութեան նուիրած աշխատար գործը, զոր կ'աւարտէ երեք տարիէն, այսինքն 1469 Դեկտեմբեր 26ին : Անունն էր՝ «ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ», այս վերնագիրը կը կրեն միշտ ձեռագիրները և կը յաւելուն՝

- « Գրեալ 'ի ձեռն Ամիրտուլվաթ բժշկին Ամասիացոյ, »
- « 'ի յերկիրն Մաեկեղոնիայ. 'ի քաղաքն ռումի ի՝ Աստ. »
- « ւամային լեառն, որ Թուրք Ֆրիպէ անուանեն զայս »
- « քաղաքիս. 'ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի »
- « Տեառն Ըստապիսի Սրբական Կաթողիկոսի ամենայն »
- « Հայոց. 'ի թուականութեան Հայոցս Զ ժ ե (915+551= »
- « 1466) Դեկտեմբերի են. »

«ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ»ը սկիզբը ունի բաւական ընդարձակ Յառաջարանութիւն մը որուն մէջ Ամիրտուլվաթ՝ բժշկական արուեստի և դիտութեան վսեմութեան ու օգտակարութեանը վրայ, ինչպէս նաև բրժիշկներու պարտականութեանը վրայ պարզ ու մեկնոճով մը ճառելէ յետոյ, իւր անձին համար ալ հարեւանցի կ'արձանադրէ քանի մը տեղեկութիւններ, տեղեկութիւններ խիստ մշտնջիւղ, որոնք թէև հակիրճ՝ բայց խաացուն մն են անոր բովանդակ կեանքի փոթոր-

կալից ելեւէջներուն, միանգամայն յայտարարը՝ անոր
ուսումնասէր, գրավատակ կենցաղին, անսեթեւեթ,
համեստ՝ քայց մեծ գիտնաւորութեան և վեհ գգացում-
ներուն, և աւա՛ղ, նաև դառն յուսախարութիւննե-
րուն. ահաւասիկ.

« Եւ այլ խնացիր եղբայր, որ գիրքս մեր խօսքն է, »
« առաջին խմտատախրացն եւ վերջին փոխադրուիցն. եւ »
« այս՝ ամանայն բժշկացն խօսքն է, որ է Բագարատն (1), »
« եւ Դեղիւնոսն. Յուսն եւ Դէվճանիսն, եւ Հունան »
« եւ այլ բազում ժողովուրդ որ 'ի յայս արհեստս շատ »
« աշխատեւր են, մենք զոցա գիրքն ընտրեւր ենք եւ գրեւր »
« շատ աշխատանօր եւ յայմհետէ գրեցի շատ աշխա- »
« տանօր զայս մեռամբ իմով, եւ շատ դժուարութիւն եւ »
« պատահմանք եմ քաշել 'ի յանօրինաց. եւ 'ի յայլազ- »
« րաց, 'ի Դատաւորաց, 'ի Թագաւորաց եւ իշխանաց, եւ »
« շատ գրեանք էի ժողովեւր 'ի յարեպաց եւ 'ի պարսից, »
« եւ 'ի Թուրքաց, շատ զարկալութիւն էի քաշեւր եւ զժա- »
« մանակին զչարն եւ զբարին եւ զպատահմունքն էի »
« կրեւր. զհարստութիւն եւ զսղբատութիւն էի քաշեւր, »
« եւ 'ի յերկրէ 'ի յերկիր շատ բժշկութեան զարհեստն »
« էի գործեւր եւ փորձեւր էի յիմ միտքն շատ ղեղեր եւ »
« Թարբիպնի եւ շատ ծառայեւր էի հիւանդաց եւ մեծա- »
« մեծաց եւ իշխանաց եւ հարիւրապետաց եւ քաղաքա- »
« ցոց եւ աշխատաց մեծի եւ փոքու, եւ շատ չար եւ »
« խորի էի տեսեւր, եւ հանց եղայ ես այժմ որ ոչ հորըս- »
« տութեան կու խնդամ եւ ոչ աղբատութեան կու տրտ- »
« միմ, եւ զամենայն չարն եւ զբարին մէկ կը տեսնում »
« եւ անհոգեւ եմ այս ամենայն ցանկութենէն կենցաղոյս, »
« եւ յուսամ 'ի Տէր Աստուածն մեր Յիսուս Բրիստոս... »

* * *

Հաջորակ այս ողբերգու արտայայտութեան, հա-
կառակ տառապանքի ու վիշախ այս ողորմ հառաչան-

(1) Հիպոպոկրատ:

քին, Ամիրտուլամի չի բարոյաւքուիր և իր մխիթարու-
թիւնը կը գտնայ դարձեալ իւր արուեստին կիրարկու-
թեանը մէջ: Վերողբեալ առղերէն դիւրին է մակարե-
րել, թէ նախապէս ունեցած է նա բժշկական բարձր
դիրք մը, ուրկէ կը զրկուի թէև, բայց զայն վերստին
ձեռք կ'անցունէ Թիլիպէի մէջ. հոն է որ օրէ օր փայլելով
կը փայլի նա, անոր ճարտարութեան համբաւը երթալով
կ'աւելնայ, և թերեւս կը տարածուի Մակեդոնական
աշխարհի սահմաններէն իսկ դուրս, Ֆաթիհ Սուլդան
Մէհմէտէտի ականջը համեմելու աստիճան, որովհետեւ
կը տեսնենք որ Ամիրտուլամի 1470—1472 թուական-
ներուն արգէն Կ. Պոլիս է փոխադրուած, և ինձ ա'յն-
պէս կը թուի թէ Սուլդանական հրամանով նա եկաւ հոն:

Բիւզանդական կայսրութեան մայրաքաղաքը 1453էն
ի վեր նուաճուած Ֆաթիհ Սուլթան Մէհմէտէտ Բ.էն,
պէտք ունէր արդարեւ փորձառու կարող բժիշկներու:
չէ՞ որ Սուլթանը իր նորոտաշ քաղաքաւայրին յառաջ-
դիմութեանը և զարգացումին համար Ասիոյ այլեւայլ
տեղերէն, Կիլիկիայէն և Մեծ ու Փոքր Հայքէն բռնի
ուժով արուեստի ու գիտութիւններու քաջ տեղեակ
անձերը Կ. Պոլիս քերելու աւաւ ու բնակեցուց հոն.
ինչո՞ւ չընդունիլ թէ բեւել տուաւ նաև ձեռնհաս,
ճարտար բժիշկներ և անոնց հետ և մերս Ամասիացին
Ամիրտուլամի, որուն հուշակը Թիլիպէ քաղաքը հանած
էր արգէն ամէն կողմ:

Ինչպէս որ ալ եղած ըլլայ, սա գտնէ ակներեւ է
թէ՛ Ամիրտուլամի Կ. Պոլսոյ մէջ շուտով կ'ունենայ յա-
ւադոյն դիրք մը, մայրաքաղաքի ամէնէն երեւելի բը-
ժիշկը կը ճանչցուի, ո'չ միայն ազգայիններէ, այլ և՛
Պոլսաբնակ օտար համայնքներէ, և կը փորձուիմ իսկ

ընդունիլ թէ տակաւ առ տակաւ մուտ կը դնէ աշտ
խարհակալ Սուլթանին քով, և դո՛ւքէ անոր քոչկա-
պետ կը կարգուի. և ահա թէ ինչ փաստերու վրայ կը
հիմնեմ այս վարկածս:

1480 Յուլիս 8ին՝ Կ. Պոլսոյ մէջ Չարխս փան Ս.
Ասուածածին եկեղեցւոյ հովանիին տակ, ոմն Մարտիրոս
Արեղայ, Ամիրտովաթ քոչկին համար կ'ընդօրի-
նակէ Սաղմոս մը, որուն վերջը արձանագրած Յիշա-
տակարանէն կ'ուսանինք, թէ երբ Սուլթան Մէհմէտ
Բ. 1473ին Ուզուն Հասանի դէմ պատերազմի գնաց ու
չարաչար յաղթելով զայն հալածեց ու փախտական
քչեց մընչեւ Դաւրէժ, վերադարձին քիչ մը ատեն կանգ
առաւ Բաքերդ քաղաքը, ուր չատ մը աւար մողվելէ
զատ, ձեռք անցուց ձեռագիր Սաղմոսարան մը թան-
կարժէք, զոր հետը Կ. Պոլիս բերաւ. ասի պատմելով՝
Մարտիրոս Արեղայ կը յաւելու թէ՝ «Ասես զայն "միւ-
սովաք բժիշկն եւ ազատեաց ի գերութենէն»:

Գրիչ Արեղայն մանրամասնութիւն չի տար, թէ
ինչ կերպով Ամիրտովաթ կրցաւ զայն Սուլթանին
քովէն առնել, բայց պարզ է՝ որ այսպիսի փափուկ
ձեռնարկի մէջ յաջողելու համար, սէտք էր՝ զի նա
բաւական մօտ ապրէր եւ բաւականի մեծ ազդեցու-
թեան տէր մէկը ըլլար անոր քով. ուստի ճշմարտու-
թենէ հեռացած չե՛նք ըլլար բնա՛ւ ընդունելով, թէ
մեծ փափեալին անձնական թիչկն էր Ամիրտովաթ,
որ Հայկական թանկագին հնութիւն մը, նուիրական
մատենան մը այլադէն մարդու ձեռքը տեսնալով՝ յու-
ղուեցաւ, վրդովեցաւ, և ո՛վ գիտէ ինչ աստիճանի

ազաչանք — պաղատանքներով յաջողեցաւ զայն ստանալ : Այս ազատած ձեռագիր Սաղմոսին վրայէն է, որ Ամիրտուլաթ իրեն համար Մարտիրոս Աբեղային ընդօրինակութիւն մը ընել կուտայ, այդ ընդօրինակուածը Ամիրտուլաթի անձնական սեպհականութիւնը եղած է, բոլորազիր է այն և մագաղաթեայ, որ տարիներու և դարերու ընթացքին ձեռքէ ձեռք պտտելէ վերջ, այժմ իմ ստացուածս եղած է 1895էն ի վեր և զոր ծանօթացուցած եմ ժամանակին ժանրամասն կերպով : (1)

Ձեզ կը ներկայացնեմ զայն այսօր իբր միակ յիշատակը Ամիրտուլաթէ մեզի հասած :

* * *

Բայց միայն այս Սաղմոսին ազատագրուիլը չէ՛ որ ինձ ենթադրել կուտայ, թէ Ամիրտուլաթ Սուլդանական կամ պալատական բժիշկ էր, կան ուրիշ պատճառներ ևս. առաջինն է՝ այն ատենի թուրք կայսերական աստիճանաւորութեան տիտղոսները, զորս անոր անունին քով կը կարդանք. «Ախապասի» կոչուած իր մէկ աշխատութեանը մէջ. այդ տիտղոսներն են՝ Բամասան կամ Բեմասան (նորոգիչ-հմայիչ), Պօսթա.նր-պաւի (անձնապահապետ), ինչպէս նաև ձեռան-պաւի պատուանունը, որ կը նշանակէ «գլխաւոր բժիշկ կամ «գլխաւոր վիրաբոյժ» :

Երկրորդը՝ որ աւելի վաւերականութիւն կուտայ մեր ենթադրութեան, հետեւեալ պարագայն է՝

Ամիրտուլաթ իր «Անգիւսաց Անպէս»ին մէջ երբ Թիմիմահետում (հայերէնը՝ մասնեհար) կոչուած (terre

(1) «ԱՄԻՐՏԱՆԻՎԱԹԻ ՍԱԳՄՈՍԸ» Հանգէս Ամսօրեայ 1895 Չգոստոս էջ 246—249.

sigillée de Lemnos) կաւին պատմութիւնը երկարորէն
կը գրէ. կը յաւելու՝

« Եւ անպիտան ծառաս ըիջ մի յիշեցնեմ վասն մատ- »
« նեհար յաւուն, ի թափանաթեան Հայոց ՁԻԹ (==9297 »
« 551=1480) ամին ի թագաւորութեան Սուլթան Մուհա- »
« մատ Խանին որ կայսր էր նստել ի Պոլիս, եւ զրուց »
« եղաւ վասն մատնեհար կաւին, որ գտնալին զինքն. եւ »
« զրկեցին ի Սարակենոսաց ազգէն մէկ բժիշկ մարդ մի »
« ի յայն կղզին որ Լիմնոս անուանի, որ երթար գանուր »
« զայն տեղն ուր մատնեհար կաւն է. եւ զնաց եւ զն »
« գտաւ ի յայն կաւէն, եւ այլ գտաւ ի այն մէկալ ազգ »
« կաւէն որ գունն կու ելանէր, եւ երեք թագաւորին, »
« եւ տեսան բժիշկնին, եւ զն ընդունեցան. եւ այլվի »
« հրամայեաց թագաւորն մեր Գ. մարդու որ երթան զըտ- »
« նուն զմատնեհար կաւն, եւ այն Գ. մարդուն մէկ բը- »
« ժիշկ է Պարսից աշխարհէն, եւ մին բժիշկ էր Հոռոմոց, »
« եւ մին այլ ի այն տեղաց մարդկացն էր, որ ունէր »
« զարոհեստն նկարակերպութեան. եւ զնացին ելան ի »
« այն կղզին եւ գտան ի հան ծեր մարդիկ եւ հարցան, »
« եւ գտան զընանք վասն պատմութեան մատնեհար կա- »
«ւին, եւ զտեղն որ կու ելանէր գտան եւ փորեցին, եւ »
« հանին, ի այն կաւէն՝ որ էր մատնեհար կաւն, եւ բե- »
« րին թագաւորին մերոյ եւ առին պարգեւ ի թագաւորէն »
« եւ այն տեղն որ այն կաւն կուլինէր դուռ դրին եւ »
« պահապանք դրին, եւ չեն ի ձրի տար ի յայն կաւէն »
« մարդու. եւ ի այս կաւէս թագաւորն մեր շինել երես »
« շատ փարչեր որ ջուր կու խմեն, եւ զայլսն ի խազնան »
« եղիր եւ պահեց. Հիմայ մերձ է մեզ եւ հեշտութեամբ »
« կու գտնունք զկաւն. ի վերայ այսօր տարի մի անցաւ »
« եւ թագաւորն մեր մեռաւ, եւ ի Կ. Պօլիսն շատ վնաս »
« եւ թաղթան եղիւ եւ յետոյ խաղաղութիւն եւ Քրիստոսի »
« փառք յաւիտեան. »

Վերոյիշեալ երեք տիադոսները, և այս հատուա-
ծին մէջ քանիցս ըսուած՝ թագաւորին մերոյ, թագա-

ւորն միւր, և նման խօսքերը ապացոյց են, թէ Ամիր-
տովմաթ Սուլթան Մէհմէտին անպատճառ շատ մա-
տիկ ապրող մը, կամ անոր անձնական բժիշկներէն էր։
Մասնեհար կաւին քննութեանը մէջ թերեւս ինքն ալ
մաս ունեցաւ, թէեւ յայտնի չխօսիր այդ մասին։ Բայց
տողերը որով Սուլթանին մահը նա կը յայտնէ, ունին
գողունի շեշտ մը արտածութեան և այլ շեշտը՝ ըստ իս,
ոչ ոք պիտի ուզէր զենել հոն, եթէ ոչ՝ Սուլթանին սի-
րելի մը կամ անկէ բարերարուած մը։

* * *

Սակայն կը տեսնենք, թէ Ամիրտովմաթ մեծու-
թեան ետեւէ վաղող փառատենջիկ, փառամոլ մը չէ,
որովհետեւ, դատելով իր գրուածներէն, զինքը կը
գանանք միշտ պարտականութեան բարձրութեանը
վրայ։ Բժիշկ է նա միայն և միայն, հոգեւին նուիրուած
առաջադրման օգտին, և հետամուտ յա-
ռաջադիմութեան ու զարգացումի, ինչպէս շատ լաւ
մեզ ցոյց կուտայ այս կէտը Սաղմոսագիր Մարտիրոս
Աբեղայն երբ կը տողէ՝

« Դրեալ մեռածք յոգնամեզ եւ անարժան ծառայի »
« Մարտիրոս Աբեղայի, ի խնդրոյ հեղահոգի եւ պստուա- »
« կան քաջ խմատասիրի, ճարտար հմուտ հին եւ նոր »
« կտակարանի եւ աստեղաբաշխութեան արհեստի, Ամիր- »
« տովմաթ մեծ (ՎՄ՝ գիրը դէպի վեր երկարած) գիտ- »
« նականի եւ արագ բժշկի որ ամեն գործով անունն »
« երևի, զի գոիւ եւ զգիշեր ո՛չ դադարի միշտ ի գի- »
« տութիւնս պարտպի եւ անհաս բանի հասու լինի... »

Մարտիրոս Աբեղայի այս յիշատակութիւնը ամե-
նամեծ դրաւականն է Ամիրտովմաթի բժշկական կարո-
ղութեան, անոր հմուտ դիտնականութեան ու անխոնջ
գրասիրութեան, որոնցմով ահա ինքը համարուած է

նաև 15րդ Դարու ազգային ժառանգութեան ալ հեղինակաւոր մէկ դէմքը, զոր գովութեամբ կը յիշեն իրենց պատմագրութիւններուն մէջ՝ Հ. Ղ. Ինճիճեան, Հ. Մ. Զամչեան, Հ. Գ. Զարպճանեիւան և Հ. Ղ. Ալիշան:

Եւ արդարեւ՝ Ամիրտուլաթ Կ. Պօլսոյ մէջ ալ գրիչը ձեռքէ չթողուր բնա՛ւ և կը նստի գիշերաջան տքնութիւններով իւր Ազգին համար պատրաստել նոր աշխատութիւն մը, Դարմանաբանութեան կամ աւելի՛ Դեղաբանութեան վրայ ճառող ճոխ բառարան մը, զոր կ'սկսի 1478ին և կ'աւարտէ չորս տարիէն՝ 1482ին:

Դեղերու վերաբերեալ ամէն տեսակ բաները այս գործին մէջ կը դասաւորէ նա այբուբենական կարգաւ, անոնց նախ Հայերէն անունը կը գրէ, դէմը՝ Արարեբէնը, Պարսկերէնը, Յունարէնը ու Լատիներէնը, միանգամայն նշանակելով ամենուն համար առանձին առանձին մէկին ու լաւ բացատրութիւններ, որոնցմով կը ներկայանայ ամբողջ գործը մի հսկայ երկասիրութիւն: «ԱՆԴԻՏԱՅ ԱՆՊԷՏ» զարմանալի յորջորջումով զայն որակած է Ամիրտուլաթ և կ'ըսէ՝ թէ գրած է՝

« Ի ժամանակս Բագաւորութեան խմայելացոց ազ- »
 « զին սարակինոսաց ի յազգէն հազարու, որ նուաշեալ »
 « էր Թագաւորութիւնն յունաց ի մայրաքաղաքն Կ. Պօլիս, »
 « ի Թագաւորութեանն Սուլթան Մուհամատ խոնին, եւ »
 « ի կաթողիկոսութեան Էջմիածնայ Տեառն Սարգիսի, »
 « ի հայրապետութեան մայրաքաղաքիս Կ. Պօլսի Տէր »
 « Նիկողայոսին, եւ ի թմին Հայոց ԶԻԷ (927-1551=1478) »
 « առ զւան Սրբոյն Նիկողայոսի սրանչնկագործ հայրա- »
 « պետին: »

Ժամանակագրական սոյն յիշատակութենէն յետոյ կը դնէ իւր անունն ալ սապէս,

« Թ՝ արգէանեցաւ այս գիրքս մէկմէկ դեղերուն զօ- »
 « րութիւն ի ր սղում գրենույ այլ ազգաց, մեռաւք մե- »
 « դուստ, աւգիտաւ եւ անիմատ բժշկին Ամիրտօլում- »
 « թին Ամասխոյոյ, »


Այս քանի մը բառերը բաւական են մեզ ցոյց տա-
 լու թէ՛ ո՛ր ասորիճանի անխոնջ ու երկար տքնութեան
 արդիւնք է «Անբիտաց Անպէտ»ը. որչա՛փ հեղինակներ
 թղթատեց արդեօք Ամիրտօլվաթ կատարեալ ընելու
 այս երկսուշունչ աշխատութիւնը, որուն վրայ գովելի
 համատեղեալք մը «Թաւրդ Լանկցաւ» կը գրէ, ու իրեն
 հետեւ ալ՝ «Մեղսուր, ամպլիսան եւ անիմատս բժիշկ»
 ածականները :

Ամիրտօլվաթի այս գործին յիշատակարանէն է, որ
 կուսանինք թէ 1478ին Կ. Պօլսոյ մէջ Ս. Երկոզայոս
 անունով եկեղեցի մը ունէին Հայերը : այս աշխատու-
 թեան յառաջաբանութեան մէջ է որ Ամիրտօլվաթ կը
 յիշէ իրմէ հին և հնագոյն Հայ բժիշկները, ինչպէս՝
 Մեծն Միսիթար բժիշկը, Ահարոն և որդին՝ Ստեփանոս
 բժիշկը, և ասոնց ազգականները Շօշլին, Սարգիս,
 Յակոբ, Դեղին, Շմաւոն և Վահրամ, որոնց առաջինը
 նշանաւոր էր 12րդ դարու մէջ, իսկ միւս ութը՝ ապրած
 են 13—14րդ դարերում :

Եւ ասոնց համար կը գրէ թէ՛

« Շատ գրեանք էին շինել վասն դեղերուն զօրու. »
 « Թեանն եւ օգտութեանն, բայց կարճառօտ էին արար- »
 « եալ.... եւ վասն այս որ հանապազ մեղի պակասու- »
 « թիւն կար վասն դեղերուն, եւ այս պատճառաւ այլ »
 « ազգաց կարօտեալք : »

Այս պակասութիւնը լրացնելու և օտարին կարօտ
 չը լինելու համար է, որ Ամիրտօլվաթ ձեռք կը դարնէ



այս բնդարձակ աշխատութիւնը շարադրելու, և կը տեղեկացնէ գրելով, թէ՛

- « Յետոյ գնացար ի շուրջ եկաք բազում քաղաքանի, »
- « և անցար զԺողն, և շուրջ եկար զաշխարհուն մօ. »
- « կեդանացոց, և եկար քնակեցար ի մայրաքաղաքն ի »
- « Գ. Պօլիս, և հաւարեցար շատ գրեանք, ի յայլ ազգաց »
- « և աշխատեցար և ուսար զքառերն և զանուանքն »
- « ազգի ազգի... »

Եւ երբ իւր գործը կ'աւարտէ, կը գրէ Ոտանաւոր վերջաբանութիւն մը, որուն մեջ դարձեալ իւր աշխատասիրութեանը վրայ տեղեկութիւններ տալով, լռելեայն կ'իմացունէ այդ առթիւ տարած յոգնութիւնները և իրեն յուր տեղացի, և հօրը յով ըլլալը ըսելէ յետոյ կը խնդրէ, որ զայն կարգացողները կամ անկէ օգտուողները զինքը չմոռնան և Ողորմիս հանեն իրեն :

1889ին երբ Պարիսի *Bibliothèque nationale*ի մէջ գտնուած Հայ Բժշկական Ձեռագիրներու վրայ կատարած ուսումնասիրութիւններս կը հրատարակէի Կ. Պօլսոյ «Արեւիկ» թերթին մէջ⁽¹⁾, առաջին անգամ ըլլալով կը ծանօթացնէի ես այդ Ոտանաւորը. այսօր դարձեալ զայն կը սիրեմ կարդալ, սկսի մը իրեն հետ ապրած ըլլալու երազը ունենալու համար. 26 տողէ կը բաղկանայ այն և է՝

- « Փ սուք քեզ Տէ՛ր և Արարիչ, մեզ յղորմնայ,
- « Որ տուող ես մարդկային միտք եւ սգայ,
- « Քո ստեղծուածն են 'ի յաշխարհս զինչ որ կայ,
- « Ահնայն շունչ կենդանու քեզ փառք կուտայ.
- « Գոհանամ 'ի քէն Քրիստոս անմահ արքայ,
- « Որ տուիր ինձ ժամանակ մինչեւ 'ի սմայ.
- « Դ. տարի զտիւ եւ զգիշեր աշխատեցայ.
- « 'ի բազում օրինակաց յաւարտի սայ.

(1) «Արեւիկ» 1889 թիւ 1730, 1731 եւ թիւ 1733, 1734.

- « Գրեցի կատարեցի զինչ բան որ կայ,
- « 'ի քսոյից բժշկութեան զինչ որ գրտայ,
- « Աւարտեմ զսայ զինչ լեզուս, զինչ որ ուսայ,
- « Վի Հայոյ, եւ 'ի յունաց, եւ յարապկայ,
- « 'ի պարսից, եւ 'ի թուրքաց քիչ լողինայ,
- « 'ի Հայոցն եւ արարեալ բոկիզքն դորս,
- « 'ի վերայ այթուքէնից զինչ դեզ որ կայ,
- « եւ զՆէն այլ կու յիշեմ 'ի վերջքն դորայ,
- « եւ բժիշկ Ամիր Տուլաթ՝ հայրս եղիայ,
- « Ար ծնեալ եմ 'ի քաղաքն Ամասիայ,
- « եւս հիմայ եմ բնակել 'ի Բիւզանդեայ,
- « Ար իսկի գորս նման քաղաք չկայ,
- « Ար աթոռն է թուրք աչգին հիմակ որ կայ,
- « Ար առի տաճիկ լեզուաւ կոստանդինայ,
- « Դժողին եւ շինողին ով որ կարգայ,
- « Ողորմի Քրիստոս որ ասէ Հայր մեղայ,
- « Ար 'ի բանս այլ պակաս իրք չի մնայ,
- « Փաւր քեզ Տէր Հայոց թրականը լմայ, »

Ոտանաւորին վերջին բառը՝ «լմայ»-ը, ցոյց կուտայ լռելեայն, «ԱՆԴԻՏԱՅ ԱՆՊԷՏ»-ի աւարտման Հայկական թուականը սապէս՝ $1+մ+ն+ա+յ=30+200+400+1+300=931$, որ կը համապատասխանէ Բրիտտոսի ($931+551=$) 1482 թուին:

Բայց որչա՛փ պարզութիւն կը բուրեն սոյն տողերը, որչա՛փ խոնարհ համեստութիւն, և միանգամայն՝ քսնի՛ մեծ ու վեհ կը պատկերեն Ամիրտուլվաթի բժշկական դէմքը:

«ԱՆԴԻՏԱՅ ԱՆՊԷՏ»-ը դեռ չէր աւարտած, երբ Ամիրտուլվաթ կը շարադրէ 1481ին երրորդ աշխատութիւն մ'ալ, ընդարձակ՝ «Ագրապաւին»-ը (Pharmacopée) որ էր՝ Դեղաբանութեան և Դեղագոլգութեան նուի-

րուած բառարանաձեւ ընդարձակ երկասիրութիւն մը ,
 թէև քաղուածոյ Արապ Հեղինակներու , մանաւանդ
 անուանի Իսկ Պէյթարի նման բժիշկի մը գրածէն , բայց
 մեծապէս պատուարեր Հայ Բժշկական Մատենադրու-
 թեան :

Այս գործը ունի երկար յառաջարանութիւն մը ,
 կատարեալ դասագիրք մը , որուն մէջ Ամիրտովաթի
 կ'իմացնէ թէ ինչու շինեց այս Ախրապատինը , և պատ-
 ճառ ցոյց կուտայ ըսելով՝ թէ Հայերէն լեզուով արդէն
 եղածները շատ անկատար ու անկարգ ըլլալուն , ինքը
 ուղեց նոր մը յօրինել , ամբողջական բան մը , որպէս
 զի այս արուեստով պարապողներուն լաւ առաջնորդ
 մը պատրաստած ըլլայ :

Այս Յառաջարանութիւնը՝ ուրկէ մաս մը Պարիզի
 Bibliothèque nationaleի Հայ Բժշկական Զեռագիրներ-
 րու 108րդէն քաղելով առաջին անգամ հրատարակեցի
 1889ին(1) , շատ հետաքրքրական է , նախ որ՝ լաւ
 պատուէրներ կուտայ դեղեր պատրաստել ուղղորդելու ,
 յետոյ կ'աւանդէ՝ թէ 15րդ դարու մէջ կային Հայ
 Բժշկական ուրիշ գործեր ալ դեղարարութեան վերա-
 բերեալ . ապա ցոյց կուտայ Ամիրտովաթի շարադրած
 Ախրապատինին ո՛ր առթիճանի ընդարձակ բան ըլլալը ,
 և նաև կ'իմացունէ՝ հեղինակին ունեցած աշատօնական
 տիտղոսները՝ զորս յիշեցի կանխաւ :

Կ'արժէ կարգալ այդ յառաջարանութեան կամ լաւ
 եւս՝ նախադիտելիքին միայն վերջին կտորը , որ ամբող-
 ջին վրայ կրնայ գաղափար մը մեզ տալ և է հետեւեալը .

« Եւ կատարեցաւ առաջար անութիւն ախրապատինի »
 « կամօքն Աստուծոյ , եւ կը յիշեմ մէկ քանի քան մի »

(1) «Արեւիկէ», Կ. Պօլսոյ 1889, թիւ 1733.

« այլ թէ պատճառն ի՞նչ է որ այս առաջարկութիւնս »
 « գրեցաւ. տեսայ ես, անպիտան ծառայ Աստուծոյ, Ամիր »
 « Տօլուաթս 'ի թուականութեանս Հայոց ԶԼ (930+55)= »
 « 1481) Ապրիլ ամսոյ 'ի 2 'ի տօնի աւետման սրբօրհոյ »
 « 'Աստուածածնին' ի մայրաքաղաքն 'ի Կ. Պօլիս, եւ »
 « գտար շատ աղքատացեալներ, որ զրած էր Հայոց-ի- »
 « զուով. եւ զինչ որ կու յիւէին զայս շինուած իրացս »
 « զպատճառսն չի զիտէին՝ թէ այս յէ՞ր էր. եւ զգեղե- »
 « բուն թաղարան (1) չգիտէին. եւ զինչ որ կուշինուէր »
 « չէր աղէկ՝ 'ի գործն պակասութիւն կայր, եւ չէին գի- »
 « տիլ զայս առաջարկութիւնս, եւ մեք գրեցար եւ »
 « յայտնեցար. զի ով որ 'ի յայս արուեստըս հետեւի »
 « նայ. իւր շինած զեղարան պակասութիւն չգտնուի, »
 « կամօքն Աստուծոյ, եւ զիս՝ ճառահալաշի եւ պօտան- »
 « Յապաշի՝ յիշեցէր 'ի Տէր: »

« Եւ այս արուեստիւս զխառնուած զեղերուն եւ զմա- »
 « ճանուն զընութիւն եւ զատիճանն կու գտնան եւ կու- »
 « հանեն եւ կույիմանան. թէ այս խառնուած զեղերուն »
 « զօրութիւն եւ տաքութիւն եւ հովութիւն եւ զիմու- »
 « թիւն եւ զօրութիւն. քանի աստիճանի է հասել ստուգ »
 « յիմանան եւ գիտանան. եւ ես անպիտան ծառայ ծա- »
 « ռայիցն Աստուծոյ, 'ի յայս արուեստս շատ աշխատե- »
 « ցայ մինչեւ զսա գտա եւ ստուգեցի կրկին, որ հեշ- »
 « տութեամբ յիմանաւ, եւ յուսանողացն հեշտ լինի, եւ »
 « զիւրութեամբ ուսանի եւ հասկանա զճաճուկ արուեստն, »
 « որ այս ամենայն բժշկապետքն զայս ծածկեալ էին »
 « եւ չէին գրել բժշկարանին եւ ծառանիդ յայտնեցի »
 « կամօքն Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն: »

Այսչափը բաւական թող ըլլայ մեզ դատելու, թէ
 Ամիրտուղլաթ ո՞ր աստիճանի նուիրուած մ'էր իւր ար-
 ւեստին, և ո՞րչափ քերձ փափաքող մ'էր որ բժշկու-
 թեան կարեւորագոյն մէկ ճիւղը՝ Դեղաբարութիւնը,
 կամ Դեղապատրաստութիւնը կանոնաւոր զարգացում

(1) Պատրաստութիւն:

ունենար իւր Ազգին մէջ : Ամիրտովաթի տուած խրատները կամ գծած կանոնները այսօր իո՛ղ կարելի է ոգտագործել , քանի՛ որ անոնք՝ Հիպպոկրատեան , Փաղիանոսեան , Դիոսկորոսեան ևայլն նախնադոյն ժամանակի բժիշկներու քարոզած առողջ սկզբունքներուն վրայ պատուաստուած , գեղեցիկ ու ամփոփ ժողովածու մ'են , տքնաջան Հայ գրիչէ մը խմբագրուած , ճիշդ այն պահուն երբ Վերածնունդի Դարը դեռ իր արշալոյսը նոր կ'ողջունէր :

Յայտնի չէ թէ «Անգիտաց Անպէտ»էն և «Ախրապա-սի»էն վերջը ուրիշ աշխատութիւն ունեցա՞ւ Ամիրտովաթ : Պարիզի Հայ Բժշկական Զեռագիրներու շարքին մէջ տեսած եմ բաւական ընդարձակ գործ մը , որ՝ ՎԱՍՆ ՆՇԱՆԱՅ ՀԻՒԱՆԴԻՆ, ԶԿԵՆԱՅ ԵՒ ԶՄԱՀՈՒՆ» վերնագիրն ունի և ներքէն ալ՝ ՃԱՌ ԷԶՊԱՇԻ ԸՌԱՔ « ՄԱՏԱՆԻՆ ԱՐԱՐԵԱԼ , ՈՐ Է ԱՄԻՐՏՈՎԱԹ ԲԺԻՇԿԻՆ « ԱՄԱՍԻԱՅԻ » վերտառութիւնը կը կրէ , բայց թուական չունի և ինձ կը թուի՝ թէ մաս կը կա Վիսրապատինին , որուն ընդարձակ ծաւալին նայելով՝ կրնանք ընդունիլ , թէ այս գործը աւարտած պէտք է ըլլայ «Անգիտաց Անպէտ»էն չատ հտքը :

Բայց միթէ արդէն արտադրած երեք հսկայ գործերը բաւական չեն որ իրաւունք ունենանք դեռ ուրիշներ ալ պահանջելու իրմէ : Ամիրտովաթի յառաջացած տարիքին պարւզներն էին անոնք . հեղինակը յոգնած պէտք էր ըլլալ , և դուցէ հիւանդ ալ էր , որովհետեւ՝ դէպի 1490ի մօտերը կը գտնանք զինքը Պարոտ քաղաքին մէջ , ուր զինքը տեղնողներ եղած են , ինչպէս կը տե-

դեկանանք «ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԷՏ»ին չա՛տ ընտիր մէկ օրիօնակին պարունակած Յիշատակարանէն :

Այդ Ձեռագիրը , որ Ամիրտուղլաթի ողջութեանը , 1490 թուականէն առաջ գրուած ըլլալ կ'երեւի և որուն մէջ վերեւ յիշուած սաղմոսագիր Մարտիրոս Արեւդայն ալ Ամիրտուղլաթի խնդրանքով , ճիշդ այդ թուին ծաղկագրութիւններ գծած է , կը գտնուի այժմ՝ Լոնտոնի British Muséum-ը և կը կրէ Բրիտանական թանգարանին Հայերէն Ձեռագիրներուն 3712 թուահամարը(1) : Շա՛տ հաւանական կը թուի՝ որ այս ձեռագիրը Ամիրտուղլաթի մատնէրուն բուն արդիւնքը ըլլայ , կամ անկէ կատարուած սրբագրութիւններ պարունակէ :

Այսչափ աշխատութիւններ գրելէ վերջ , քանի մը տարի ևս կ'ապրի Ամիրտուղլաթ , ապա իւր յոգնաջան և վառտակարեկ կեանքը խոր ծերութեան մէջ կը կնքէ՝ 8 Դեկտեմբեր 1496ին Հինդչարթի օրը , ինչպէս կ'աւանդէ 1772ին Կ . Պօլսոյ մէջ ընդօրինակուած «Օգուտ Բժշկութեան» մէկ ձեռագիրը , զոր ողբացեալ մեծանունն բժիշկ Սէրվիշէն 1893ին նուէր տուած է ինձ : Այդ ձեռագրին աւանդածը Ամիրտուղլաթի Տապանագիրն է գոգցես , դրօշմուած է այն առանձին սպիտակ էջի մը վրայ այսպէս՝

- ՓՈՆԵՅԱԻ Դ ԳՐԻՍՏՈՍ ԱՄԻՐՏՈՎԼԷԹ ԲԺԵԿՆ •
- ԹԱՐԴԱՆՈՂ ԳՐՈՅՍ Դ ԹՈՒԻՆ ԱՐԱՄԵԱՆ ԱԶԳԻ •
- Զ ԽԵ (945+551=1496) ԴԵԿՏԵՄԲԵՐԻ Ը , ՀԻՆԴ •
- ՇԱՐԹԻ ՈՐ : ՈՒ ՈՒ ՈՐ ՈՐՄԻ ԱՍԷ , ՏԷՐՆ ՆԱԽԻՐ •
- ՈՐՈՐՄԵՍԻ . ԱՄԷՆ : •

(1) Այս ձեռագրին մասին , առաջին անգամ Մագիստրոս Մեսրոպ Եպիսկոպոս , 1903ի Օգոստոսի «ԱՐԱՐԱՏ» թերթին մէջ հրատարակեց մանրամասն տեղեկութիւններ իմ խնդրանքով :

Չգիտենք թէ ո՛ւր կը գտնուի անոր Հանգ-տարա-
նը, բայց նկատելով որ իւր ծերութեանը, և իր մահէն
վեց տարի առաջ կը գտնուէր նա Պուրսա, կը հարց-
նեմ թէ արդեօք հոն չէ՞ վախճանած. և իմ այս հար-
ցումը կ'ստիպիմ կրկնել, մանաւանդ երբ անոր Սաղ-
մոսին վերջին էջին վրայ կը կարդամ՝ թէ Կիրակոս
անուանով մէկը Պուրսայի մէջ ծախու առած է այդ Սաղ-
մոսը Ամիրտուլվաթ բժիշկէն. առնողը ինքն է որ կը
յիշատախէ այս կէտը, գրելով՝

« Յետոյ առչ մեղաւոր Կիրակոս »

« Պարոն ամիր օովլար բժրօկէն »

« Ս. Քլորիմի Պուրսայ քաղաքէն »

« Աստուած վայելել ապէ մտէն: »

Մեղաւոր Կիրակոս՝ իւր գրածին քով թուական
չէ դրած, և կ'երեւի՝ թէ Սաղմոսը գնած է Ամիրտու-
լվաթի մահէն յետոյ, գո՛ւցէ անոր ընտանիքէն, որով-
հետեւ իւր յիշատակագրութեան անմիջապէս ներքեր
կը յաւելուէ՝ «Աստուած ողորմի իր հոգւոյն ամէն, Հայր
մեղայ» բառերը...

Ամիրտուլվաթ Սալդան Մէնէմէտ Յաթիւնէն 15
տարի վերջը մեռած է. ունեցած է եղեր ինչպէս կ'ա-
ւանդէ Սաղմոսագիր Արեղայն, «բարի զաւակներ» ո-
րոնց մէկը կը կոչուէր՝ ԱՄԻՐՒՆՏԻՆ (1) (Ամիրի սիրտ
կամ Ամիրի զաւակ):

Ամիրտուլվաթ մեծանուն բժիշկէն վրայ արդէն քա-
նիցս, թէ՛ հայերէն և թէ՛ ֆրանսերէն գրած բլլալովս (2),
այժմ անոր մասին աւելի երկար խորհրդածութիւններ

(1) «ՀԱՅ ԲՈՒԾԱԿ. Հ. Դ. Արշանի էջ 9.

(2) «ՀԱՆՐԱՅ ԱՄՈՐԵԱՅ. 1893 Ապրիլ, Յուլիս, Դեկտեմ-
բեր. ԲԻԻԶԱՆԴԻՈՆ. Թիւ 5394, 5397, յուլիս 1914.

« Bulletin de la Société Française d'Histoire de la Mé-
decine. Paris, 1914 էջ 444—459.

ընկել չէ նպատակս, այլ՝ անոր մահուան Չորս հարիւր քսան և հինգերորդ տարեդարձին առթիւ, իրեն համար այս հաշիւանցի ու տկար ներդրեանս արտասանելով՝ զինքը մեր ներկայ և ապագայ բժշկական սերունդներուն գնահատութեանը արժանայնել, այն թանկագին ծաւայութիւններուն համար, զորս իրեւ բժշկ մասուցած է նա իւր Աղգին և մարդկութեան բնական անբաւական, և իրեւ գոշ՝ Հայ Բժշկական Մատենասիրութեան մասնաւորապէս, և այս՝ ա՛յնպիսի ժամանակի մը մէջ՝ եւր բարարտաներու հալածանքը բովանդակ Հայ Աղգին սեւ ճակատաւիրն էր, և Ամբրտովաթ աստանդական կեանքով մը տաշուբեր, կը տառապէր ուժգին յուզումներու, խորալիշտ տառապանքներու դառն յուսախափութիւններու ծանրածանր շղթայաւորումը մը մէջ, ինչպէս տեղեկացանք իւր իսկ զբաւած հաճառող ինքնակէնսագրութենէն:

Ամբրտովաթի բժշկական եւ իւր, որոնք Աստուածաշունչի մեծութեամբ խոշորէ՛լ հատոցներ պիտի յորինէին, եթէ մամուլի յանձնուէին, թէև քաղաւածոյ են Արար, Յոյն, Պարսիկ և Ասորի հին երեւելի բժիշկներու գործերէն, բայց է՛ պարունակեն նաև անոր անձնական փորձառութիւններուն արդիւնքը, զորս զիւշին է մակարեւել զեւե նշխարացուցածս իւր քանի մը կտորներէն:

Անոր աշխատութիւնները ծայրէ ի ծայր լի են բժշկական և առողջապահական, ինչպէս նաև դարմանական, բաղձապիսի շահեկան յանձնարարութիւններով, ապացոյց հեղինակին խորազննին ակտագէտի կարողութեան, հանճարեղ դեղագէտի ու դիտուն դարձանաբանի ինքնայատուկ փորձարկութեան:

Զաւաւ՝ վերածնունդի դարուն , իրաւ է թէ՛ Ամիր-
տուղլօթի տեղեակ չէր այն բժշկական նորութիւններուն ,
դորս հետզհետէ կը ծնէր իր ատենի Եւրոպան , ուր
Բիւզանդացի երեւելի գիտուն բժիշկներ կ' Պոլսոյ ա-
ռուճէն փախստաւ'սն , կ'սկսէին նոր զարկ ու թռիչ
տալ բժշկական աշուեստին , այսու հանդէս՝ պսկաս
օժտուած չէր նա դիտող մօքի և քաջանմուտ գիտունի
սքանչելի յատկութիւններով : Ինքը գերազանցապէս
գիտցաւ հնագոյն հեղինակներու բժշկական գործերը
խոր ուսումնասիրութեամբ իւրացնել . և Աղգին մէջ
իրմէ շատ աւալ նշանաւոր եղած Հայ բժիշկներու ,
մանաւանդ Մխիթար Հերացիի երկիւղած հետեւող մը
ըլլալ , և անոնց գծա՝ ուղին ա'լ աւելի հարթելով՝
իսկ սպէս պատուարեր հանդիսանալ Հայ բժշկութեան :

Առանց Ամիրտուղլօթի գրաւոր փաստակներուն ,
մենք մեր հնագոյն բժիշկներու անուններն անդամ
չօլիտի գիտնայինք այսօր , և չա'տ մը դեղերու . բոյ-
սերու հին հայերէն յորջորջումներուն անտեղեակ պի-
տի մնայինք ընտելին :

Յետագայ ժամանակներու մէջ երեւցող բոլոր Հայ
բժիշկները , Ասաբ և Պունեաթ Սերաստացիները , Գա-
լուստ Ամասիացին և ուրիշնէ՛ր՝ մինչև 18րդ Դար , ի-
րենց առաջնորդ ունեցած են միշտ Ամիրտուղլօթը .
այդ բժիշկներն ալ դրած են թանձրամարմին բժշկա-
րաններ , սակայն՝ ուրիշ բան ըրած չեն բայց եթէ՛ նայն
և նման հաշտատ ընդօ՛նակութիւններ Ամիրտուղլօթի
հիշատակայ տրնութիւններու արդասիրներէն . և այս-
պէս՝ Ամիրտուղլօթ բժիշկին աշխատութիւնները տեսակ
մը դպրոց եղած են կամ ուսումնարան , ուրկէ՛ ծնած

են կրամ մը ինքնուր բժշկներու, զոր օրինակ՝ Հէքիմ Տէր Յակոբը Ասպանանի մէջ (1681), Սարգիս բժշկ Անեցի (1700), Պօղոս բժշկ Կարնեցի (1714), Ղազար բժշկ Տէր Գրիգորեան Սերաստիոյ մէջ (1723), Տէր Կիւրեղ բժշկ Սերաստեան Կ. Պօլսոյ մէջ (1743), Եղիազար Եպիսկոպոս բժշկ, Առաջնորդ Սերաստիոյ (1744), Արեւելցի Խաչատուր (1751) Հալէպի մէջ, Բժշկ Մնացական Դպիր Կ. Պօլսոյ մէջ (1792), ինչպէս նաեւ այս վերջնոյն վաղեմները՝ բժշկ Համբարցում Պէքմէզեան, բժշկ Ստեփան Սալլեան, բժշկ Իգնատիոս միաչեկ, բժշկ Սահակ Էսլլն (1), որոնց չարագրած բժշկարանները կը մնան դեռ և քանիչատը կը դռնուին մատենադարանի մէջ, բոլորն ալ առանց բացառութեան, ճշգրիտ բնագործականութիւններ Ամբրստովաթի, բայց աւելի՝ զանաւր գործածողներուն կամ անոնցով բժշկութիւն բնողներուն անուններովը ճանչցուած:

Եղած է՝ որ Ամբրստովաթի բժշկարաններուն աշակերտ այս ինքնուր, ինքնաշուք բժշկները, հակառակ իրենց խիստ սահմանախակ շիտութեան, մեծ համբաւ չաճած են ժամանակին Պօլսոյ կամ ալլուր, վարպետ անունով հռչակուած են. ավերեւներ կամ սափրիչներ պատահաբար յանկարծ ճառար բժշկներ եղած են Ամբրստովաթի բժշկարաններուն չնորիւ, և սակայն՝ այս տեսակ բժշկներու, կամ լաւ եւս՝ չէքնմներու:

(1) British Muséumի «Անգլիաց Անգլէսին Յիշատակարանին մէջ կը յիշուին՝ բժշկ Խօճա Պարխուսար Սերաստացի, եւ ասոր որդին Տէրահ Ասար + զաւակը Բժիշկ Պիտրոս, ինչպէս նաեւ Սարգիսաց Բժիշկ Եսլլեկ եւ ուրիշներ, որոնց բոլորն ալ ապրած են 16—17 դար:

դաւաններն էին, որ հետզհետէ թողուցին աւանդական
ընտանի բժշկական արհեստը սովորու- սոյն եղանակը,
թոթովեցին տէրտութեան ձորձը և ս'յսան տակաւ առ-
տակաւ դեմել Եւրոպա և նախ Իտալիա, համալսարա-
նական ուսում առնելու, և օրինաւորապէս կիրթ բը-
ժիշկներ ըլլալու: Այդ դիմումը չդարեցաւ երէք, և
ա՛լ աւելի թափով շարունակուեցաւ ու կը շարունա-
կուի մինչեւ այսօր: պիտի ներուի ինձ անշուշտ, որ
այս հրաշալի բարեփոխումն ու յեղաշրջութեան հայր
դաւանիմ ես այսօր Ամիրտովաթ բժիշկը:

Դարեր՝ «Ամիրտովաթ» անունը անշինջ սլանա-
ծ են, անձանք ըրած են Հայ Մեծ բժիշկը, և անոր աշ-
խատութիւններուն օրինակները՝ հարիւրներով, թերեւ
հազարներով բռնած հասուցած են մեզ. դեռ երէկ Հայ
վանքերու(1) և հայրենի տուններու նուիրական մատ-
եաններն էին անոնք Աղօթագիրքերու հաւասար. անոր
պատուիրած դեղերը առանց վարանումի միեւ չաւատքով
տակաւին կը գործածուին Հայաստանի հեռաւոր անկիւն-
ներուն մէջ, ունին շատ ու շատ հետեւողներ, և ունե-
ցած են ա՛յնպիսի ջերմեռանդ հետեւողներ, որ մինչեւ
անգամ Ամիրտովաթի գիրքերուն վրայ դրօշմած են՝
«Աստուածային բժեկարան» կամ «Քաղաւորական բժրե-
կարան» մակդիրները: «Ախրապատին» 1700 թուա-
կանէն առաջ գրուած ալժմ ինձ սեպհական մէկ ձե-
ռագրին մէջ, բնդօրինակիչը այնչափ սիրած է Ամիր-
տովաթը ու հիացած անոր վրայ, որ անոր երեւակա-
յական մէկ պատկերը դժած ու դուրսն ալ լուսեղէն
պսակով ընկած է. ի՛նչ երկիւղած յարգանք անոր
յիշատակէն . . . :

(1) ՊԱՏՄ. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍԵ ԷԶՄԻԱՇՆԻ. Մոսկուա 1876, էջ 76.

Ամիրտուլվաթ բժիշկին գրիչն ու լեզուն՝ այո՛, ազգային դասական մատենագրութեան չվերաբերի բունա՛ւ. ո՛չ ոսկեդարու քաղցր բոյրը ունի, ո՛չ ալ արծաթի գրականութեան ախորժ համր, բայց գեղեցիկ է իբրեւ ժողովրդական բարբառ. հայեցի ընտանի ոճերու և ռամկօրէն ասացուածներու հարուստ բովաք մ'է այն, որու մասին ա՛յնչափ գովութեամբ ճառած է բաղմբախտ Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան Վիէննական ներհուն Միսիթարեանը, իւր «Հետզոտութիւնք նախնեաց ռամկօրէնին» վրէժն անուն գեղեցիկ աշխատութեանը մէջ։ Ամիրտուլվաթեան երկերէ մեզ կ'աւանդեն՝ Հայ բժշկական կոչիչ նախադասութիւններ, սիրուն պարբերութիւններ, նաև՝ ախտերու, դեղերու, բոյսերու, զանազան խոտերու և մարդակազմութեան վերաբերեալ գեղակերտ բաւեր, որոնք արդի Հայ բժշկական գրագիտութեան մթերքը կրնան խիստ պատշաճօրէն ճոխացնել։ Պիտի չունենա՞նք արդեօք Մեկենաս մը, որ զանոնք ի տիպ արձանացունէր...

Ամիրտուլվաթի աշխատասիրութիւնները, որոնց հաւասար չափով մեր հին բժիշկներէն ո՛չ մէկը կրցած է բան արտագրել, այդ աշխատասիրութիւնները կ'ըսեմ, իրենց ՉՈՐՍՈՒՆԻՍ ԴԱՐՈՒ պատկառելի նութեամբ ամենագեղ ծագիլներ են, ո՛չ միայն ժերդ Դարու Հայ բժշկական պատմութեան, այլ և՛ նոյն դարու հայկական աղքատ, ամենախեղճ, ինկած մատենագրութեան։ Հայ բժշկութիւնը իրաւամբ կրնայ պարծիլ Ամիրտուլվաթով։

Ոյսօր 8 Դեկտեմբեր 1921, անոր մահուան 425րդ տարեշրջանին, երբ բաղդ կ'ունենամ իմ տկար խօսքերով այդ բաղմամաստակ և բաղմբախտ բժիշկին յիշատակը վերարծարծել, բարէ՛, ինձ այնպէս կը թուի՝

թէ նա կենդանի է, գրադած գրեյու իր ՎԳՈՒՏ ԲՈՒՆՈՒՅԱՆՆԵՐ, «ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ»ը շարագրեյու կամ վերջացնելու «ԱԳՐԱՊԱՏԻՆ»ը, գորս պիտի նկատեմ. ես մըշտ հաստարմատ կ'իթողները Հայ բժշկական գրագրատութեան, և անթառամ մէկ բբարէոնը Հայ Բրժշկութեան հին Պատմութեան. ցաւալի է միայն որ Ամբրոսովովի իտական բուն ձեռագիրները չունինք և մեղի հասածները անոնց բնագործնակութիւններն են իրարմէ բոլորովին տարբեր, ազաւաղ և շատ անգամ լի աններդի սխալներով. այսու ամենայնիւ՝ պէտք է գուրգուրանքով նայինք անոնց վրայ, խնամով պահենք մեր հին բժշկութեան այդ թանկագին Գուշարձանները:

Երբ ծագի մը նորահաս ու դեղատեսիլ պատուները հաշակելու ըլլանք, միտքերնիս բերե'նք՝ թէ այն քաղցրահամ խնձորը կամ ուր ծիրանն ու դեղձը, որոնք մեր լեզուն կ'անուշեն և քիմքը կը պարարեն, իրենց փալլն ու գոյութիւնը կը պարտին: Հողին մէջ թալուած՝ կոտուած, ագեղ, խորտուբորդ, ցանուցրիւ, կոշտ ծառարմատներուն, թէ ասոնց միջոցաւ է որ կը ծծեն անոնք իրենց կենսաւնակութեան հոյզը, լինելութեան ներտարը. մեր հին բժշկարանները մեր նոր բժշկութեան հոգածածուկ արմատներն են և այնպէս ալ պիտի նկատուին յաւէտ. յարդանքով թղթատե'նք զանոնք, ակնածանքով կարգա'նք մեր երբեմնի բժշկութեան այդ հնամենի դասագիրքերը, որոնց վրայ տարիներով աչքի լոյս է թափած Հայ բժիշկ մը, 'ի սէր իւր Ազգին յառաջադիմութեան:

Տարիներէ ի վեր, բայց մասնաւոր դերձի տտեններս հին ու նոր աշխարհի նշանաւոր բժիշկներ, սկսած են մեծ կաշեւադրութիւն տալ բժշկական պատմութեան,

ինչպէս նաեւ հին բժշկական դէմքերու և անոնց աշխատութիւններուն . բաւական չհամարեցին այդ առթիւ եղած դասախօսութիւնները , հրատարակութիւններն ու հանդէսները և ահա անցեալ տարիէն սկսած՝ ձեռնարկեցին բժշկապատմութեան միջազգային համաժողովներ գումարել . առաջինը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 1920 Օդեսսոսին , երկրորդը այս տարուան Յուլիոսին Պարիս(1) և երրորդը յառաջիկայ 1922ին տեղի պիտի ունենայ Լոնտոն . այս ալ բաւ չսեպելով՝ հաստատեցին Բժշկական ՊԱՍՏՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳՅԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ մը , որ զանազան ազդերու մէջ ճիւղեր պիտի ունենայ , որպէս զի՝ առէն ետքի բժշկութեան անցեալ հին պատմութիւնը կաշնան աճարել , և այդու՝ բժիշկներու ուսման ծանօթութիւնները ա՛լ աւելի ընդարձակել : Գ . Պոլսոյ Հայ բժշկական դասը հրաւէր ստացաւ գործակցել այս Ընկերութեան , և անոր Հայկական ճիւղ մը հիմնել . խո՛մը մը բժիշկներ ու դեղագործներ չլարանեցան կազմել բաղձացուած ճիւղը և իսկոյն հաղորդեցին Պարիս՝ ընկերութեան կեդրոնին . ես ուրախութիւնը ունիմ յայտարարելու այժմ , թէ ընկերութեան ընդհանուր քաղաքական Ծօթ . ԼՅՆԵԷԼ — Լազարովիի կողմէն ինձ եկած նոր գիր մը շնորհաւորելով Հայ բժիշկներու փութկոտութիւնը , կը յարէր՝ թէ Բժշկապատմութեան Միջազգային Ընկերութեան առաջին և անդրանիկ ճիւղը եղաւ ՀԱՅԿԱԿԱՆը , և կը մաղթէր՝ որ անի յաջող սկիզբը բլլար ուրիշ բաղձաթիւ ճիւղերու :

Այսպէս , մեւ յիշայ կը ծանաւանայ ուրեմն այժմէն ամենամեծ պարտականութիւն մը , այն է՝ ջանալ խաւառէն լոյսի հանել ու ծանօթացնել Հայ Բժշկական Պատմութեան դեւ թաշուռն պահուած ու անյայտ մնացած կողմերը , որպէս զի Հայ բժշկութիւնը կաշնայ՝ իսկական անդրանիկութեան , առաջնութեան տեղը

(1) Որուն մասնակցեցաւ Հայ Բժշկական Միութիւնը :

գրաւորան արդիւնքով մը գրաւել Բժշկատպատմութեան
նորահաստատ Ընկերութեան մէջ :

Ամբրտովաթ Ամասիացի նշանաւոր բժիշկը , այսօր՝
իւր մահուան 425րդ Տարեկիցին , կարծես այս նորա-
տակաւ ուժգին կոչ մը կ'ընէ մեզի , եւր բժիշկներու
կաժ բժշկութեամբ պարապողներու ուղղած իւր մէկ
հոյակապ խոստականին մէջ՝ անոնց ուսումնասիրու-
թիւնը հրահրելու , արուեստասիրութիւնը վառելու
համար կը գրէր՝

« Եզի՛ր հետեւող իմաստութեան հետ , »

« Եթէ չուսանիս՝ քրժիշկ ես անպէտէյ : »

Յիշե՛նք այս խրատը և դուն գործե՛նք , որ Հայ
բժշկական դասու ծոցէն նոր նոր Ամբրտովաթներ
ծնին , ա՛ւելի եւս բարձրացնելու Հայ բժշկութեան
պատիւը , որ Ամբրտովաթի օրերէն մինչև հիմա՝ երբէ՛ք
և երբէ՛ք չէ՛ դադարած արդէն ձգտիլ գէպի աւելի
փայլուն յառաջաբիմութիւններ : Յիշե՛նք Տ Դեկտեմ-
բեր 1496ը , Հայ Բժշկական Պատմութեան սուգին ,
միանգամայն անկապտելի մէկ փառքին այդ յաւեր-
ժացիշատակ թուականը , և քանա՛նք գիտական նորա-
նոր գարգացումներով մեր շարչարուած Ազգին դափ-
նեղսակը հիւսել :

Ազգի մը մէջ՝ բժշկական գարգացումը , գիտուն
բժիշկներու գոյութիւնը այդ ազգին ամէն տեսակ
գործերուն վրայ կրնայ ունենալ խիստ բարերար ուղ-
ղեցութիւններ , և սխալ մը չէ Մեծն Հոմերոսի այն
նշանաւոր խօսքը՝ որ կ'ըսէ . «**ՅԱՆՁԻ ԱՅՐ ԲԺԻՇԿ
ԱՅԼՈՅ ԲԱԶՄԱԳՈՒՆԻՅ Է ՓՈՒՍԱՆԱԿ(1) :**»

ՏՕԶԹ. ՎԱՂԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Քերա , 8 Դեկտեմբեր 1921

(1) ԻՆԻԱԿՂԵ , ԺԱ. տող 514 :

ՀԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒՆ ԳՐԱԴ.



FL0029390

ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆԻ
ՀԱՅԵՐԷՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. — Գիւցումն Կ. Պոլս 1888 —
2. — Հայ բժշկ. ձեռագիրք Բարիգու » 1889 —
3. — Բժիշկ Տօք. Արալիյէն Էֆէնսի Վիեննա 1893 —
4. — Արդի Հնդկանայ բժիշկներ » 1896 —
5. — Դպրոցական Առողջապահքն. Վիեննայի 1903 —
6. — Յիսնամեակ Բժշկութեան
Տօք. Հ. Պ. Մասքուսեանի Վիեննա 1913 —
7. — Երեմիա. Պիտի Սրմապօլայ
Պասմք. Հասար Ա. » 1913 —
8. — Համալսարանական հին Հայ
40 բժիշկներ Վիեննա Հ.Ա. 1893—1914
9. — Հայ Բժշկական ձեռագիրք » » 1893—1911
10. — Կ. Պոլսոյ Բժշկն. Դպրոցին
Հայ դասախօսներ Կ. Պոլս Դարձան 1920—1921
11. — Հայունիներ. Հայ բժշկն. պատ-
մութեան մէջ Կ. Պոլս 1920 —
12. — Ներքողեան Ամիրսովար Ամա-
սիացի իշէին » 1922 —

ԳԻՆ 40 ԴԱՀԵԿԱՆ

Արդիւնք տարողովին կը պատկանի
Հայ Բժշկական Միութեան